Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Գործարարության աջակցման խորհրդի (ԳԱԽ) 2009թ. ապրիլի 8-ի նիստի N 83-150 (1) արձանագրության 12-րդ կետով և 2009թ. ապրիլի 21-ի նիստի N 91-170(2) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին

Ապրիլի 8-ի նիստի N 83-150 (1) արձանագրություն

1. (արձ. 12-րդ կետ) ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ Ա. Սարգսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին՝ Հայաստանի բանկերի միության հետ համատեղ քննարկել շարժական գույքի սեփականության պետական գրանցման և գրավի առարկաների իրացման ընթացակարգերում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Հայաստանի բանկերի միության առաջարկությունները, վեր հանելով նաև ՀՀ Նախագահի կարգադրությամբ նախկինում այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները, և գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը ներկայացնել հարցերի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ՝ գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստում դրանց քննարկումները կազմակերպելու նպատակով:

Ընթացքը

Բանկերի միության առաջարկությունները՝ կապված շարժական գույքի սեփականության պետական գրանցման և գրավի առարկաների իրացման ընթացակարգերում ծագած խնդիրների լուծման վերաբերյալ անցած ժամանակահատվածում քննարկվել են ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ամփափվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Հաշվի առնելով ներկա պարագայում խնդրի լուծման կարևորությունը և առաջարկությունների նկատմամբ գերատեսչությունների կարծիքների տարբերությունները, հարցի քննարկումը ներառված է ԳԱԽ-ի սույն նիստի օրակարգում, որպես քննարկման ենթակա 2-րդ հարց:

Ապրիլի 21-ի նիստի N 91-170 (2) արձանագրություն

2. (արձ. 3-րդ կետ) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին՝ հաշվի առնելով, որ հարկային մարմնի կողմից հաշվառվող բոլոր հարկային պարտավորությունների մարման արդյունքում առաջացած հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդը հարկ վճարողի ցանկությամբ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու ընթացակարգի հստակեցման և կատարելագործման, ինչպես նաև խնդրի կարգավորումը ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասում ներառելու հարցերի շուրջ առկա են տարաձայնություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ մեկ անգամ ևս քննարկել հարցը ու կոնկրետ առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին: Խնդրի կարգավորման վերջնական արդյունքների

մասին տեղեկատվությունը ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

Ընթացքը

Հարցը քննարկվել է 2009թ. հունիսի 16-ի Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի նիստում, որի ընթացքում որոշվել է հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին՝ խմբագրել ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծը՝ մասնավորապես անցումնային դրույթներում ներառելով դրույթ, ըստ որի հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդի (գերավճարի) հաշվանցման իրավունքն ուժի մեջ կմտնի 2013 թվականի հունվարի 1-ից և կտարածվի միայն ավելացված արժեքի հարկի գումարներին։

3. (արձ. 4-րդ կետ) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ մեկ անգամ ևս քննարկել հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումարը հաշվանցելու դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում նաև՝ հարկ վճարողի բանկային հաշիվների արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու ընթացակարգ մշակելու և ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասում այն ներառելու հարցերը և կոնկրետ առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին՝ խնդրի կարգավորման վերջնական արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնելով գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

Ընթացքը

Հարցը քննարկվել է 2009թ. հունիսի 16-ի Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի նիստում, որի ընթացքում որոշվել է հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանին՝ նախապատրաստել համապատասխան եզրակացություն ԳԱԽ-ի նիստի ընթացքում հնչեցված հարցադրմանը և ներկայացնել ԳԱԽ-ի հաջորդ նիստում։

4. (արձ. 5-րդ կետ) Ընդունել ի գիտություն ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի շուրջ գործարար շրջանակներում կազմակերպել շահագրգիռ քննարկումներ և արդյունքները տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը։

Ընթացքը

Ի կատարումն վերոհիշյալ հանձնարարականի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը ս/թ ապրիլի 20-ին ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը տրամադրել է ԳԱԽ-ի քարտուղարությանը: Քարտուղարությունն իր հերթին ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը տրամադրել է ավելի քան 50 կազմակերպությունների՝ առաջարկություններ և դիտողություններ ձևավորելու նպատակով: Քննարկումների արդյունքում քարտուղարությունը ամփոփել և կազմել է ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի նկատմամբ շուրջ 142 առաջարկություններից և դիտողություններից բաղկացած փաթեթ, որն էլ ս/թ հունիսի 30-ին ներկայացվել է ՀՀ վարչապետին, ՀՀ ֆինանսների նախարարություն և շահագրգռ այլ մարմիններին՝ քննարկումներ կազմակերպելու նպատակով, որի արդյունքներն էլ պետք է <u>ներառվեն ԳԱԽ-ի նիստի օրակարգում:</u>

ՀՀ ֆինանսների նախարարության հետ խորհրդակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հետևյալի մասին. հաշվի առնելով առաջարկությունների և դիտողությունների մեծ ծավալը և շատ հարցերի սկզբունքային նշանակությունը, ինչպես նաև, որ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է պետական մարմինների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ՝ ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի նկատմամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ միասնական դիրքորոշում ձևավորելու համար և, որ վերոհիշյալ առաջարկությունների և դիտողությունների փաթեթը դեռևս քննարկվելու է աշխատանքային խմբում, որից հետո բիզնես միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպվելու են քննարկումներ աշխատանքային խմբի դիրքորոշումների շուրջ, <u>առաջարկվում է</u> վերը նշված աշխատանքները մեկ ամսվա ընթացքում ավարտելուց և ամփոփելուց հետո անմիջապես <u>հրավիրել ԳԱԽ-ի հատուկ նիստ</u>՝ միայն ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի շուրջ վերջնական քննարկումներ կազմակերպելու նպատակով:

5. (արձ. 6-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ հիմք ընդունելով «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ Է. Սողոմոնյանի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանի հաղորդումներն այն մասին, որ ՀՀ Կենտրոնական Բանկի, Հայաստանի բանկերի միության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ Հայաստանի բանկերի միության կողմից բարձրացված և ս/թ ապրիլի 8-ին կայացած գործարարության աջակցման խորհրդի նիստի N 83-150(1) արձանագրության 11-րդ և 13-րդ կետերով տրված հանձնարարականների կատարման շուրջ տեղի են ունեցել քննարկումներ և կողմերը եկել են համաձայնության խնդիրների լուծման կոնկրետ տարբերակների շուրջ, երկշաբաթյա ժամկետում մշակել համապատասխան փաստաթղթերի նախագծերը, սահմանված կարգով դրանք դնել շրջանառության մեջ՝ ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասում ներառելու նպատակով: Խնդիրների կարգավորման վերջնական արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին:

<u>Ընթացքը</u>

Հայաստանի բանկերի միության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների համատեղ ջանքերով խմբագրվել և հստակեցվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի ֆինանսական գործառույթներին վերաբերող հատվածը և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ՝ ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի 109 հոդվածի 2-րդ կետի 30-րդ ենթակետը նոր խմբագրությամբ շարադրելու նպատակով: Բացի այդ, նոր և համաձայնեցված խմբագրված վերոհիշյալ ենթակետը տեղ է գտել ԳԱԽ-ի քարտուղարության կողմից ս/թ հունիսի 30-ին ՀՀ վարչապետին ներկայացված ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի նկատմամբ առաջարկությունների և դիտողությունների փաթեթում: Խնդրի բովանդակային մասի հարցը լուծված է և մնում է, որ այն տեղ գտնի ՀՀ հարկային օրենսգրքի հատուկ մասի վերջնական նախագծում:

6. (արձ. 7-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ մաքսազերծման գործընթացն առավել դյուրին և հրապարակային դարձնելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում գործարարության տարբեր ոլորտները ներկայացնող իրավաբանական անձանց միությունների, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպել դասընթացներ ապրանքների մաքսային արժեքի որոշման ժամանակ ՀՀ մաքսային օրենսդրությամբ ներմուծողներին ընձեռված հնարավորությունների պարզաբանման և ուսուցման համար:

<u>*Ընթացքը*</u>

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն (ԶՀԳ) (ԳԱԽ-ի քարտուղարություն) կարևորելով նման միջոցառումների իրականացումը՝ պատրաստակամություն է հայտնել, ներգրավելով նաև Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) գործարարության աջակցության Երևանյան գրասենյակի ներկայացուցիչներին, համագործակցել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում կազմակերպել դասընթացներ ապրանքների մաքսային արժեքի որոշման ժամանակ ՀՀ մաքսային օրենսդրությամբ ներմուծողներին ընձեռված հնարավորությունների պարզաբանման և ուսուցման իրագործման կազմակերպչական և այլ հարցերի լուծման ուղղությամբ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կարծիքով կազմակերպվող դասընթացներին կարող են մասնակցել սահմանափակ քանակությամբ տնտեսվարող սուբյեկտներ, որը չի կարող անհրաժեշտ արդյունք ապահովել ներմուծման գործընթացների պարզաբանման և մաքսային արժեքի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացման գործում:

7. (արձ. 8-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ «Բիո-քիմ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Ա. Ավետիսյանի հետ քննարկել 2008թ. ապրիլին ընկերության կողմից Չինաստանից ներմուծված սարքավորման մաքսազերծման ընթացքում ծագած խնդիրը:

<u>*Ընթացքը*</u>

«Բիո-քիմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ բարձրացված հարցն ունեցել է միայն քննարկվող խնդրի գոյությունը հաստատող փաստի իմաստ, քանի որ նշված ներմուծման դեպքում մեծ հարկային պարտավորություններ չեն առաջացել, այլ միայն զարմանք և դժգոհություն մաքսային գնի կամայական ընտրության համար: Ելնելով նրանից, որ հարկային պարտավորությունները վաղուց կատարված են և ԳԱԽ-ի նիստում առաջարկվել է նման պրակտիկա անհարկի չկիրառել, ապա ըստ ԳԱԽ-ի քարտուղարության հարցման, ընկերությունը գտնում է, որ հարցի նոր քննարկում անցկացնելու հարկ չկա և չի դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

8. (արձ. 9-րդ կետ) «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվ. Գյումրիի հիդրոէլեկտրական» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Ն. Նահապետյանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննարկմանը ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեությունը լիցենզավորելու հետևանքով նրանց խոշոր հարկ վճարողներին դասելու և ոլորտում ավելացված արժեքի հարկի կիրառման հետ կապված խնդիրները:

<u>Ընթացքը</u>

ՀՀ ՓՀԷԿ-երի միությունը ս/թ մայիսի 22-ի ՀՀ ՓՀԷԿ-երի միության խորհրդի նիստում ձևավորել է առաջարկություններ և ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննարկմանը, որի վերաբերյալ ստացվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համապատասխան եզրակացությունները:

Հաշվի առնելով, որ հարցադրումների լուծման ուղղությամբ դեռևս կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվել, հարցի քննարկումը <u>ներառված է ԳԱԽ-ի սույն նիստի օրակարգում, որպես քննարկման ենթակա 3-րդ հարց:</u>

9. (արձ. 10-րդ կետ) «Սոլարէն» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Աֆյանին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել համատեղ գործունեության պայմանագրով կատարվող գործարքները ավելացված արժեքի հարկով հարկելու հետ կապված խնդիրները՝ հետագայում դրանք Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդում քննարկելու համար:

<u>Ընթացքը</u>

Ապրիլ-մայիս ամիսներին ընկերության տնօրենը հանդիպումներ է ունեցել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ և ներկայացվել ու քննարկվել են համատեղ գործունեության պայմանագրով իրականացված գործարքները ավելացված արժեքի հարկով հարկման հետ կապված խնդիրները, որի լուծման դրույթները բացակայում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ քննարկումների արդյունքում նշվել է նաև համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում ավելացված արժեքի հարկով հարկման խնդրի փոխկապակցությունը այլ հարկերի հետ և հարցի հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հարցը քննարկվել է նաև ս/թ հունիսի 16-ի Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի նիստում, որի ընթացքում <u>որոշվել է</u> ընդունել ի

գիտություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած տեղեկատվությունը «Սոլարէն» ՍՊԸ-ի համատեղ գործունեության պայմանագրով կատարվող գործարքները ԱԱՀ-ով հարկելու հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ:

10. (արձ. 11-րդ կետ) «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, գործարարության աջակցման խորհրդի քարտուղար Ռ. Հարությունյանին և առաջարկել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ համատեղ քննարկել փոքր և միջին ձեռնարկությունների կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն ներկայացվող հաշվետվությունների պարզեցման և կրճատման հետ կապված գործարար հանրության կողմից բարձրացված հարցերը և արդյունքները ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին:

<u>*Ընթացքը*</u>

Սույն հանձնարարության հետ կապված քարտուղարությունը մի շարք քննարկումներ է անցկացրել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ, իրականացրել ուսումնասիրություն 2009թ. ընթացքում պետական կառավարման մարմիններ ներկայացվող հաշվետվությունների կազմի և բովանդակության վերանայման և կրճատման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ներկա վիճակի վերաբերյալ, ներկայացրել եզրակացություն և մշակել մի շարք կոնկրետ առաջարկություններ վերը նշված գործընթացի առաջմղման կարճաժամկետ և միջին ժամկետ միջոցառումների անցկացման վերաբերյալ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը և մի շարք պետական մարմինների առնչությունը վերոհիշյալ խնդրին՝ իրականացված ուսումնասիրության արդյունքների, եզրակացության և առաջարկությունների քննարկումը ներառված է ԳԱԽ-ի սույն նիստի օրակարգում, որպես քննարկման ենթակա 4-րդ հարց:

11. (արձ. 12-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ «Ամերիկյան առևտրի պալատը Հայաստանում» իրավաբանական անձանց միության նախագահ Դ. Աթանեսյանի հետ քննարկել «Արմենինա Մարիոթ հյուրանոցայի համալիր» ՓԲԸ-ի կողմից ներմուծված ապրանքների մաքսազերծման հետ կապված խնդիրը:

<u>*Ընթացքը*</u>

Հարցի շուրջ քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ, սակայն մինչ այժմ հարցին ըստ էության լուծում տրված չէ: Հարցի էությունը հակիրճ ներկայացվում է ստորև.

Դեռևս 01.10.03թ. դրությամբ «Արմենիա Մարիոթ հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն ըստ իրենց հաշվարկների ԱԱՀ-ի գծով ունեցել է 1.024.005.800 դրամի գերավճար՝ դրա վերադարձման իրավունքը հիմնավորելով դեռևս 1998թ. օգոստոսի 13-ին ՀՀ կառավարության և «Արմենիա հյուրանոցային համալիր»-ի միջև կնքված «Մասնավորեցման պայմանագրի» 7.4 «Խտրականության բացառում» կետում ամրագրված ներդրման պահին հատկապես հարկային դաշտում գործող օրենքների և կանոնակարգերի կիրառման և ՀՀ կառավարության կողմից Ընկերության նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառման

վրա: Հարցին լուծում տալու նպատակով ընկերությունը 2005թ. հունվարի 24-ին դիմել է ՀՀ տնտեսական դատարան, որն էլ վճռել է, որ ԱԱՀ-ի գերավճարը ենթակա է հետ վերադարձման կամ հաշվանցման՝ հարկային այլ պարտավորությունների հաշվին: Ընկերությունը դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ԱԱհ-ի գերավճարը ետ վերադարձնելու կամ հարկային այլ պարտավորությունների հաշվին հաշվանցելու խնդրանքով, սակայն մնացել է անպատասխան: 01.01.2006թ.-ից մինչև 09.10.2006թ. ընկած ժամանակահատվածի համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն կազմել է «Փոխադարձ հաշվարկների ստուգման» տեղեկանք, սակայն հաշվի չի առել ՀՀ տնտեսական դատարանի 20.10.2005թ. թիվ ՏՎ-211 վճիռը, որով կրկին անգամ հաստատվել էր ԱԱՀ-ի գծով առաջացած դեբետային ողջ մնացորդի չափը և նույն վճռով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին պարտադրվել է մինչև 05.12.2005թ. պատշաճ կերպով ձևակերպել «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի 01.10.2003թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով ունեցած 1.024.005.800 դրամի գերավճարը և դրան համապատասխան կատարել Ընկերության հարկային բոլոր պարտավորությունների վերահաշվարկ: Սակայն հարկային տեսուչների կողմից դատական վճռի անտեսումը հանգեցրել է Ընկերության քարտում ԱԱՀ-ի գծով գերավճարի պահպանմանը և բոլոր այլ հարկատեսակների գծով ապառքի առաջացմանը: Ընկերությունը 2008թ. դեկտեմբերի 12-ին դիմել է ՀՀ կառավարություն, որի արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդունել է ԱԱՀ-ի 1.024.005.800 ՀՀ դրամ կազմող գերավճարի առկայությունը, սակայն գերավճարի ետ վերադարձ կամ հարկային այլ պարտավորությունների հաշվին հաշվանցում չի իրականացվել, որն էլ խաթարում է Ընկերության բնականոն գործունեությունը, մասնավորապես՝ հյուրանոցի կողմից ներմուծվող ապրանքների մաքսազերծումը խոչընդոտվում է նրա հարկային պարտավորությունների վերահաշվարկը չկատարելու պատճառով: Արդյունքում հյուրանոցը կրում է զգալի ֆինանսական կորուստներ:

ԳԱԽ-ի նիստից հետո Ընկերության ներկայացուցիչները հանդիպել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ, ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ մաքսազերծման գործընթացի հետ կապված, սակայն խնդիրը վերջնական լուծում չի ստացել, և Ընկերությունը ստիպված է ներկրված ապրանքի մաքսազերծման յուրաքանչյուր դեպքի համար դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ մաքսազերծման հատուկ թույլտվություն ստանալու համար:

12. (արձ. 13-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Ց. Գևորգյանի հետ քննարկել «ապառիկ» եղանակով, հատկապես գյուղական շրջաններում, առևտուր իրականացնելու ժամանակ հաշվիչ դրամարկղային մեքենաների կիրառման հետ կապված խնդիրները և հարցի հնարավոր կարգավորման մասին տեղեկատվություն ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին:

<u>Ընթացքը</u>

«Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Ց. Գևորգյանի կողմից բարձրացված տարաժամկետ վճարումով ապրանքների վաճառքի հետ

կապված խնդիրը քննարկվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ, սակայն մինչ օրս ոչ մի լուծում չի ստացել։

Հաշվի առնելով խնդրի այժմեականությունը՝ «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպությունը խնդրում է հարցին նորից անդրադառնալ՝ լուծում ստանալու ակնկալիքով։

13. (արձ. 14-րդ կետ) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանին՝ «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ս. Բեկիրսկու հետ քննարկել մատակարարներին գնորդների կողմից ապրանքների որոշ մասը հետ վերադարձնելու ժամանակ ապրանքների գնի վրա ավելացված արժեքի հարկի կիրառման հետ կապված խնդիրները և հարցի հնարավոր կարգավորման մասին տեղեկատվություն ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

<u>*Ընթացքը*</u>

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում մասնակիցները եկել են այն եզրահանգման, որ ավելացված արժեքի հարկով իրավական դաշտում աշխատող կազմակերպությունները առևտրային կազմակերպությունների հետ գործառնությունները կարող են կարգավորել ոչ թե առք ու վաճառքի պայմանագրով, այլ կարող են կազմել կոմիսիայի պայմանագիր, որտեղ հստակորեն շարադրված կլինեն «Կոմիսիոներ»-ի և «Կոմիտենտ»-ի փոխհարաբերությունները։

Նշված հարցը կարգավորելու համար օրենսդրության փոփոխության անհրաժեշտություն չկա, այլ անհրաժեշտություն կա շահագրգիռ անձանց շրջանակներում ճիշտ և գրագետ տեղեկատվության տարածման։

Հաշվի առնելով տվյալ գործարքների մեծ տարածվածությունը տնտեսվարման այլ ոլորտներում՝ ԳԱԽ-ի քարտուղարությունն առաջարկում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին իրեն հասանելի բոլոր միջոցներով այդ գործընթացի կարգավորման վերջնական եղանակների մասին տեղեկատվությունը տարածել հարկային տեսչություններին և գործարար շրջանակներին՝ հետագա անցանկալի իրավիճակներից խուսափելու համար։

14. (արձ. 16-րդ կետ) «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ Է. Սողոմոնյանին և «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Ց. Գևորգյանին՝ համատեղ քննարկել ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում անհատ ձեռներեցներին և փոքր ձեռնարկություններին բանկերի կողմից տրված վարկերի ետ վերադարձման նոր մոտեցումներ և ճկուն մեխանիզմներ կիրառելու հնարավորությունները՝ արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնելով գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին։

<u>*Ընթացքը*</u>

«Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահ Ց. Գևորգյանը հանդիպումներ է ունեցել Հայաստանի Բանկերի Միության նախագահի և գործադիր տնօրենի հետ: Բարձրացված խնդիրները Միությունը քննարկել է տարբեր բանկերի ներկայացուցիչների հետ և քննարկումների արդյունքում խնդրի ընդհանրական լուծման չեն հանգել, և կարծում են, որ վարկերի վերադարձման ընթացքում ծագած դժվարությունները բանկերը քննարկում են կոնկրետ ձեռնարկության հետ և կոնկրետ դեպքում, և ըստ այդմ էլ ընդունում են որոշում:

Խնդրի վերաբերյալ «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի մոտ ս/թ հոկտեմբերի 9-ին Հայաստանի Բանկերի Միության նախագահի, գործադիր տնօրենի, ՀՀ Կենտրոնական Բանկի մեթոդոլոգիայի վարչության պետի տեղակալի, ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցչի, «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության նախագահի, նրա Վանաձորի, Գյումրու և Սպիտակի մասնաճյուղերի ներկայացուցիչների, ինչպես նաև Ամերիկայի Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) երկու փորձագետների (որոնք Հայաստան են ժամանել հատկապես ուսումնասիրելու բանկերի կողմից բիզնեսի վարկավորման գործընթացի ներկա խնդիրները և միջազգային փորձի վրա հիմնված մշակելու համապատասխան առաջարկություններ) մասնակցությամբ հրավիրվեց խորհրդակցություն: Քննարկման ընթացքում մանրամասն ներկայացվեցին բոլոր կողմերի դիրքորոշումները: «Հայաստանի վաճառականներ» հասարակական կազմակերպության կողմից արվեցին 3 առաջարկություններ, մասնավորապես՝ ճգնաժամի պայմաններում դժվար վիճակում հայտնված ՓՄՁ-ների բանկերից վերցրած վարկերի պայմանների կոնկրետ դեպքերում վերակառուցման, որոշակի ժամանակահատվածում մայր գումարների գանձումից ձեռնպահ մնալու և բանկերի կողմից համագործակցության վարք դրսևորելու պատրաստակամության ձևավորելու վերաբերյալ: Հայաստանի Բանկերի Միության նախագահը պատրաստակամություն հայտնեց Միության առաջիկա բոլոր բանկերի մասնակցության նիստի ընթացքում տեղեկություն հաղորդել խորհրդակցության վերաբերյալ և հնարավոր քայլեր ձեռնարկել ստեղծված իրավիճակում բանկերի կողմից բիզնեսի հետ փոխշահավետ համագործակցման վարքագծի ձևավորմանը նպաստելու ուղղությամբ:

15. (արձ. 17-րդ կետ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Համբարձումյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի հետ համատեղ երկշաբաթյա ժամկետում շարունակել քննարկումները աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ոլորտում բարձրացված հարցերի շուրջ համաձայնեցված մոտեցումներ մշակելու համար՝ զուգահեռ իրականացնելով նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների հետ փոխկապակցված ՀՀ այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ կատարելու աշխատանքները և արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն ներկայացնել գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստին:

<u>*Ընթացքը*</u>

ԳԱԽ-ի քարտուղարության կողմից բարձրացված շուրջ 47 առաջարկությունների քննարկման արդյունքում 17 ներկայացված առաջարկություններ իրականացված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, 9 առաջարկություններ հետագայում կներառվեն համապատասխան իրավական ակտերի նախագծերում, թվով 3 առաջարկություններ արդեն իսկ իրականացված են գործող օրենսդրությամբ կամ շրջանառության մեջ գտնվող նախագծերում: 14 առաջարկություններ մերժվել են, քանի որ հակասել են Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի և ԱՄԿ թիվ 132 Կոնվենցիայի պահանջներին:

Անհամաձայնեցված է մնացել բարձրացված մեկ խնդիր, որն այսօր բիզնես միջավայրում լուրջ դժգոհություններ է առաջացրել. խնդիրը վերաբերվում է ՀՀ կառավարության 29.12.05թ. «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված գործուղման մեկնած աշխատողներին օրապահիկի և գիշերավարձի չափերի ՀՀ կառավարության 16.10.08թ. N 1243-Ն որոշմամբ կտրուկ ավելացմանը, որը վերաբերվում է հատկապես Ռուսաստանի Դաշնությանը և Մոսկվա քաղաքին: Եթե նախկինում Մոսկվա քաղաք գործուղման օրապահիկի գումարը սահմանվել էր 85 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ գիշերավարձը 144, ապա ներկայումս սահմանվել է համապատասխանաբար 196 և 334 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Գործարարներն <u>առաջարկում են</u> քննարկել գործուղումների ժամանակ ՀՀ կառավարության կողմից ոչ պետական կազմակերպությունների համար սահմանված օրապահիկի և գիշերավարձի չափերը որպես առավելագույն չափ նախատեսելու առաջարկությունը կամ այդ հարցերի կարգավորումը թողնել տնտեսվարող սուբյեկտների հայեցողությանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սույն թվականի հունիսի 30-ին ՀՀ Կառավարության քննարկմանն է ներկայացրել «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Ի լրումն վերոնշյալ փաթեթի ս.թ. հուլիսի 16-ին ՀՀ կառավարությունն է ներկայացվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Այնուհետ դրանք ետ են վերադարձվել լրացուցիչ քննարկման: Վերջին քննարկումը տեղի է ունեցել ս/թ սեպտեմբերի 29-ին Հանրապետական եռակողմ հանձնաժողովի անդրանիկ նիստում, որից հետո մեկ շաբաթվա ընթացքում ամփոփվել են կողմերի արված առաջարկությունները, և նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ՝ նախարարական սոցիալական կոմիտեում քննարկելու և ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելու համար:

Վերոնշյալ օրենքների ընդունումից հետո ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվության նրա կողմից կնախապատրաստվի ՀՀ Կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի N2301-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, և փոփոխություններ կառաջարկվի ՀՀ կառավարության 2005թ. մայիսի 12-ի N938-Ն որոշման մեջ՝ նախատեսելով դրույթ աշխատողների աշխատավարձի վերաբերյալ տվյալները ՀՀ աշխատանքի պետական տեսչությանը փոխանցելու մասին:

Միևնույն ժամանակ «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվի ՀՀ Կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի N1907-Ն որոշումը և

աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում խնդիրները կկարգավորվեն ՀՀ Կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի «Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների պաշտոնների և ցուցանիշների N1 և N2 ցուցակները հաստատելու մասին» N 1987-Ն որոշմամբ, որն անհրաժեշտության դեպքում կլրամշակվի։

ԳԱԽ-ի քարտուղարություն